Ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը պարգևատրվեց ԳԱՄԸ-ի մեդալով

Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերակցությունը (ԳԱՄԸ) որոշում է ընդունել Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանին «Գիտության զարգացմանն աջակցելու համար» արծաթե մեդալով պարգևատրելու մասին: Որոշումն ընդունվել է Կիևում կայացած ԳԱՄԸ հանդիսավոր նիստում, որը նվիրված էր Ընկերակցության ստեղծման 10-ամյակին: Ֆադեյ Սարգսյանը նիստում ներկայացրել է հայկական գիտության նվաճումները և հայկական գիտության խնդիրները, ինչպես նաև միջազգային համագործակցության խորացման հնարավորությունները: